ՎԵՐԱԾՆՈՒՆԴ

ՔԱՂԱՔԱԿԱՆ-ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹ

ԱՐՏՕՆԱՏԷՐ ԽՄԲԱԳԻՐ ՀԱՅԿ ԳԱՐԱԳԱՇ

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ
ՕԳՈՍՏՈՍ [illegible] 1947
ԹԻՒ 92—1778

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
Թեհրան եւ գաւառ ամիսը 40 ր. Ար
Հասցէ — Խիաբան Նուէֆարադ,
ԹԵՀՐԱՆ (ԻՐ

18-րդ տարի

Հեռախօս 7229

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԵՐՈՍ Լ. Ա. ՕՐԲԵԼԻ

Հայկական ՍՍՌ Գիտութիւնների Ակադեմիայի Ֆիզիոլոգիական ինստիտուտի դիրեկտորի պաշտօնակատար, դոցենտ՝ Գ. ՄՈՒՇԵՂՅԱՆ

Լեւոն Աբգար Օրբելին ՍՍՌՄ Գիտութիւնների Ակադեմիայի, ՍՍՌՄ Բժշկական Գիտութիւնների Ակադեմիայի եւ Հայկական ՍՍՌ Գիտութիւնների Ակադեմիայի իսկական անդամ է, ինչպէս նաեւ ՍՍՌՄ Գիտութիւնների Ակադեմիայի Բիոլոգիական բաժնի նախագահ, Ի. Պ. Պաւլովի անուան Ֆիզիոլոգիական ինստիտուտի դիրեկտոր, Ռազմա-Բժշկական Ակադեմիայի պետ, բժշկական ծառայութեան գեներալ-գնդապետ, Ստալինեան մրցանակի լաուրեատ։ 1945 թ. Յունիսի 10-ին ՍՍՌՄ Գերագոյն Սովետի Նախագահութեան Հրամանագրով՝ ներւային սիստեմի էւոլուցիոն ֆիզիոլոգիայի, կենտրոնական ներւային սիստեմի գործունէութեան ուսումնասիրութեան ասպարէզում աչքի ընկնող գիտական խոշոր նուաճումների, ինչպէս նաեւ երկարամեայ բեղմնաւոր աշխատանքի եւ առանձնապէս բարձր որակ ռազմա-բժշկական աշխատանքի համար նրան շնորհւեց Սոցիալիստական Աշխատանքի Հերոսի կոչում, յանձնելով նրան Լենինի շքանշան եւ «Մուրճ ու Մանգաղ» ոսկէ մեդալ։

1946 թ. նա ընտրւեց Փարիզի Բժշկական Ակադեմիայի եւ Մեծ Բրիտանիայի Թագաւորական Բժշկական Ակադեմիայի ընկերութեան անդամ։

Ակադեմիկ Օրբելին, ռուսական մեծ ֆիզիոլոգ Ի. Պ. Պաւլովի աշակերտներից արժանաւորը, հանդիսանում է Սովետական ֆիզիոլոգների ճանաչուած ղեկավար եւ ռուսական ֆիզիոլոգիական դպրոցի տրադիցիաների հաւատարիմ շարունակողը։

Դեռեւս քսան տարի սրանից առաջ, նրա խորաթափանց ստեղծագործական միտքն ու էքսպերիմենտատորական բացառիկ տաղանդը տուել են նրան հնարաւորութիւն՝ վեգետատիւ ներւային սիստեմի ֆիզիոլոգիայի ասպարէզում նախադծել աշխատանքի գիտական ուղղութիւնների հիմնական գիծն եւ դրանով իսկ վաստակել աշխարհում խոշոր ֆիզիոլոգի համբաւ։

Լ. Ա. Օրբելին ծնւել է 1882 թ.։ Տասնեօթ տարեկան պատանի, նա գիմնազիան աւարտելուց յետոյ մտնում է Ռազմա-Բժշկական Ակադեմիան, որը եւ աւարտում է 1904 թւին։ Ակադեմիայի երկրորդ-երրորդ կուրսի ուսանող եղած ժամանակ, լսելով համաշխարհային յայտնի ֆիզիոլոգ Ի. Պ. Պաւլովի դասախօսութիւնները, տարւում է ֆիզիոլոգիայով, որը եւ վճռական դեր է կատարում նրա ապագայ գիտական գործունէութեան մէջ։ Հէնց ուսանողական նստարաններից էլ նա սկսել է գիտա-հետազօտական աշխատանքով զբաղւել։ Դեռ երկրորդ կուրսում փայլուն կերպով կատարելով իր առաջին գիտական աշխատանքը՝ «Թափառող ներւի կտրելուց յետոյ ստամոքսի պեպսինային գեղձերի գործունէութեան մասին» թեմայով, արժանանում է ոսկէ մեդալի։ Ակադեմիան աւարտելուց յետոյ Լ. Ա. Օրբելին աշխատում է Ակադեմիայի Ֆիզիոլոգիայի ամբիոնում, որտեղ Ի. Պ. Պաւլովի ղեկավարութեամբ տանում է գիտական աշխատանք պայմանական ռեֆլեքսների բնագաւառում։ Չորս տարւա յաջող աշխատանքներից յետոյ, 1908 թ. պաշտպանում է դոկտորական դիսերտացիա՝ «Աչքի պայմանական ռեֆլեքսը շան մօտ» թեմայով։ Դիսերտացիայի փայլուն պաշտպանութիւնից յետոյ գիտական գործուղման է մեկնում արտասահման։ Արտասահմանում երկու տարի աշխատում է այն ժամանակւայ արեւմտա-եւրոպական խոշորագոյն լաբորատորիաներում, ուսումնասիրում է զգայարանների ֆիզիոլոգիան, էլեկտրո-ֆիզիոլոգիան, վեգետատիւ ներւային սիստեմը եւ այլն... Արտասահմանից վերադառնալով, Լ. Ա. Օրբելին Ռազմա-Բժշկական Ակադեմիայում տանում է խոշոր մանկավարժական աշխատանք նոյն Ակադեմիայի Ֆիզիոլոգիայի ամբիոնում։ 1914 թ. աշխատում է Պ. Ֆ. Լեսհաֆթի գլխաւորած լաբորատորիայում (յետագայում՝ Լեսհաֆթի անուան գիտական ինստիտուտ)։

Երիտասարդ գիտնական Լ. Ա. Օրբելու յետագայ բեղմնաւոր աշխատանքի համար պատմական մեծ հեռանկարներ է բացում Հոկտեմբերեան Սոցիալիստական Մեծ ռեվոլուցիան։ Նախ նա ընտրւում է պրոֆեսոր Լենինգրադի Գիւղատնտեսական ինստիտուտում, յետոյ՝ Բժշկական ինստիտուտում, իսկ 1944 թ., Ի. Պ. Պաւլովից յետոյ, գլխաւորում է Ռազմա-Բժշկական Ակադեմիայի Ֆիզիոլոգիայի ամբիոնը։ Այդ ժամանակաշրջանում է նա Լեսհաֆթի ինստիտուտում կազմակերպում ֆիզիոլոգիական բաժանմունք։ 1930 թ. Մօր-մանկան-երեխայի պաշտպանութեան ինստիտուտում Լ. Ա. Օրբելու համար կազմակերպւում է յատուկ լաբորատորիա։ 1933 թ. Համամիութենական էքսպերիմենտալ Բժշկական ինստիտուտը Լենինգրադում կազմակերպում է խոշոր լաբորատորիա, որի աշխատանքների գլխաւորումը յանձնւում է Օրբելուն։ Նշւած լաբորատորիաներում Օրբելու ղեկավարութեամբ աճել եւ դաստիարակւել է երիտասարդ գիտական կադրերի մի ամբողջ բանակ։

Օրբելու գիտական աշխատութիւններն ընդգրկում են ֆիզիոլոգիայի համարեայ հիմնական բոլոր բաժինները, այն է՝ մարսողութիւնը, սիրտ-անօթային սիստեմը՝ էներգիան եւ նիւթափոխանակութիւնը, սիրտ-անօթային սիստեմը, էներգիան եւ նիւթափոխանակութիւնը, շարժողական ապարատի ֆիզիոլոգիան, պերիֆերիկ եւ կենտրոնական ներւային սիստեմն ընդհանրապէս եւ ինքնավար ներւային սիստեմի ֆիզիոլոգիան առանձնապէս։ Ակադեմիկ Օրբելու մատուցած ծառայութիւնը համաշխարհային ֆիզիոլոգիայի եւ բժշկութեան հանդէպ այն յայտնագործութիւնն է, որ շարժիչ ներւի երկարատեւ գրգռման հետեւանքով կմախքային յոգնած մկանը կարող է նորից վերականգնել իր աշխատունակութիւնը նոյն մկանի սիմպատիկ ներւաթելը գրգռելու միջոցով։

Յետագայ հետազօտութիւններում Լ. Ա. Օրբելին իր աշակերտների՝ պրոֆ. Տոնկիխի, Հասրաթեանի, Կրեստովնիկովի, Ստրելցովի, Կանարսկու, Կալլանու եւ միւսների հետ միասին հանդէս բերեց մի շարք օրինաչափութիւններ մկանի ֆիզիկա-քիմիական յատկութիւնների, մկանի աշխատունակութեան մէջ սիմպատիկ ներւային սիստեմի վերականգնման հետ կապւած։ Ապացուցւել է, որ ինքը կենտրոնական սիստեմը (գանգուղեղ, երկարաւուն ուղեղ եւ ողնուղեղ) գտնւում է սիմպատիկ ներւային սիստեմի հսկողութեան եւ կանոնաւոր ազդեցութեան տակ։ Օրբելու լաբորատորիաներում պարզւած է, որ ուղեղակը ոչ միայն ազդում է օրգանիզմի շարժունակութեան վրայ, այլեւ ազդում է օրգանիզմի բոլոր ֆունկցիաների վրայ՝ մարսողական տրակտի, անօթային սիստեմի, ներւային սիստեմի եւ միւս օրգան-սիստեմների աշխատանքի վրայ։ Օրբելու դպրոցի աշխատանքում ցոյց է տրւած, թէ ինչպէս ցաւի պատճառով մարդու եւ կենդանիների ողնուղեղային հեղուկի մէջ աճում է հիպոֆիզից արտադրւած հորմոնների քանակը։

Օրբելուն է պատկանում էւոլուցիոն ֆիզիոլոգիայի հիմունքների մշակման ծառայութիւնը։ Պաւլովի մահից յետոյ (1936 թւի) նրա խոշոր դպրոցը գլխաւորում է նրա արժանաւոր աշակերտ Լ. Ա. Օրբելին։

Հայրենական մեծ պատերազմի օրերին Լեւոն Օրբելին գլխաւորում էր Ռազմա-Բժշկական Ակադեմիայում կադրերի պատրաստման գործը եւ գիտական աշխատանք էր տանում ՍՍՌՄ Գիտութիւնների Ակադեմիային կից Ռազմա-Սանիտարական յանձնաժողովում։ Ակադեմիկ Օրբելու ղեկավարութեամբ լայն կերպով ծաւալւել եւ ծաւալւում է պաշտպանական թեմաների մշակումը։ Տարւում է հետազօտական մեծ աշխատանք տրաւմատիզմի շոկի ֆիզիոլոգիական հիմունքների ուսումնասիրութեան բնագաւառում։ Մեծ գործ է կատարւած հրազէնային տրաւմաների հետեւանքների ուսումնասիրութեան՝ ինչպէս նաեւ սեպսիսի վաղաժամ ախտորոշման միջոցների մշակման գործում։ Հանրահռչակ գիտնականը գիտական խոշոր աշխատանքի հետ միասին տանում է նաեւ մեծ կազմակերպչական հասարակական աշխատանք։ Նա ներդրել է իր անգնահատելի ծառայութիւնը մեր հայրենիքի թշնամու՝ գերման-ֆաշիստական հորդաներին լիակատար ջախջախելու վեհ գործում։

«Հայրենական պատերազմի ժամանակ Լ. Օրբելին,— գրել է սովետական մեծ գիտնական, Սոցիալիստական Աշխատանքի Հերոս Վ. Լ. Կոմարովը,— ռազմա-բժշկական այն ղեկավարներից մէկն էր, որ փրկեց Սովետական բանակի մարտիկների բազմաթիւ կեանքեր։ Խոշորագոյն ֆիզիոլոգ, ժամանակակից բժշկութեան կարեւորագոյն հիմունքները մշակող Լ. Օրբելին մեծ ծառայութիւն է մատուցել մարդկութեանը, հիւանդութիւնների եւ վաղաժամ մահացութեան դէմ մղւող պայքարում։ Սովետական ժողովուրդը, Սովետական Բանակը՝ գիտութեան աշխատաւորները մեծ ուրախութեամբ դիմաւորեցին գեներալ-գնդապետ Լ. Ա. Օրբելուն Սոցիալիստական Աշխատանքի Հերոսի բարձր կոչում շնորհելու վեհ փաստին։

«Մեզ պարգեւատրելը շքանշանով եւ բարձր կոչումով,— ասել է Լ. Ա. Օրբելին մի խումբ ակադեմիկոսների շքանշաններ յանձնելու օրը,— մենք պէտք է դիտենք ոչ թէ որպէս անհատական պարգեւատրութիւն, այլ որպէս պարգեւատրութիւն սովետական գիտութեանը եւ Գիտութիւնների Ակադեմիային։ Մենք պէտք է զգանք, որ այդ շքանշանները մեզ վրայ դնում են մեծ պարտականութիւններ ու պարտաւորութիւններ՝ էլ աւելի բարձրացնելու սովետական գիտութեան դրօշը որպէսզի նա էլ աւելի բարձրացնի մեր երկրի կուլտուրայի մակարդակը եւ առաջ մղի երկիրն՝ գրաւելու առաջին տեղը ամբողջ աշխարհում»։

Ակադեմիկ Լ. Ա. Օրբելին, ոգեւորւած կառավարութեան բարձր պարգեւով՝ չի խնայում իր հսկայական գիտելիքներն ու ուժերը Սովետական առաջաւոր գիտութեան զարգացման ու բարգաւաճման համար։

«ՆԷՋԱԹԷ ԻՐԱՆ» ԹԻՒ 881 «ՆԻՒԶՈՒԻԿԻՑ»

ԱՄԵՐԻԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՒՈՒՄ Է ԵՐՐՈՐԴ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԱՄԱՐ

Լինքըլնի, Թէոդոր Ռուզվէլտի, Ուիլսընի եւ [illegible] Ռուզվէլտի ազատասէր եւ պացիֆիստ հայրենիքում — որ աշխարհի համակրութիւնն ունէր — այսօր հնչում են պատերազմի շեփորները։ Ցաւելով նկատում ենք որ մեծ լիբերալներ Ուիլսընի եւ վերջին Ռուզվէլտի նախագահական աթոռը գրաւած պարոն Թրումէնը բացարձակ անզգուշութեամբ մի նոր եւ անսպասելի խաչակրաց արշաւանք է սկսել Խորհրդային իշխանութեան դէմ։ Եւ նա չի թաքցնում իր ռազմապատրաստութիւնը եւ խաւարի, յետադիմութեան ու շահագործման ուժերը զինելով՝ մի երրորդ աշխարհային պատերազմի է առաջնորդում, ամենուրեք իր խոշոր եւ անձնագին պատրաստութիւնները տեսնելով ընդդէմ երկրի իր հաւատարիմ եւ քաջայաղթ դաշնակցի։

«Նիւզուիկ» լրագրական վերնագրով յօդւածը կը պարզի ընթերցողներին թէ ի՞նչ տեսիլի ու կործանարար հրաբխային վիճակ է ծրագրւած երկրի պացիֆիստական եւ մարդասէր Ամերիկայում, որը սպառնում է վերջ դնել մեր համակ քաղաքակրթութեան։

Մենք մեծ համակրանք ունենք դէպի Ամերիկայի Մեծ Հանրապետութիւնը եւ դէպի նրա մեծ ժողովրդի իմաստութիւնը ու ջերմապէս ակնկալում ենք, որ այդ իմաստութիւնը մի անհաղթելի թումբ կը լինի միլիտարիստական այդ կոլոսալ պատրաստութեանց դէմ եւ խնայել մեր մարդկութեանը աներեւակայելի աւեր սպառնացող, աշխարհաւեր պատերազմը։

(Շար. տես Բ. էջ)